



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 24 ՄԱՐՏ, 2025

ՏԵՐՈՒՄԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ Ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեալս ԿԻՍ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐՎԱԿԱՆ

Բարուն հոգւոց բանաւորաց, աղբիւր լուսոյ, բաշխող շնորհաց.
Ի փակիլ դրանց բնութեանց մարմնոց, լոյս տուր աչաց սրտից մերոց.
Ի գիշերաց առ քեզ կանխել, ընդ հրեղինացն օրհնաբանել.
Զի ի տուրնջեան և գիշերի տացուք քեզ փառս անլռելի:

ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ

Անեղ բնութիւն, մեղայ քեզ մթօք իմովք, հոգւով եւ մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս վասն անուանդ քում սրբոյ:

Տեսող ամենայնի, մեղայ քեզ խորհրդով, բանիւ եւ գործով, ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց, եւ գրեա՛ զանուն իմ ի դպրութեան կենաց:

Քննող գաղտնեաց, մեղայ քեզ կամաւ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ. թողութիւն շնորհեա մեղաւորիս, զի ի ծննդենէ աւազանին մինչեւ ցայսօր մեղուցեալ եմ առաջի աստուածութեանդ քոյ՝ զգայարանօք իմովք եւ ամենայն ան-դամօք մարմնոյս. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՇԱՐՎԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՄ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ: (X3)

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարե-խօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա:

ՇԱՐՎԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն եւ նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,

աջ թո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,

ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,

ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.

եւ ողորմեա՛ թո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՍԱՂՄՈՍ 78

ԱՍՏՈՒԱԾ ԻՆՉՊԷՍ ԱՌԱՋՆՈՐԿԵՑ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԿԸ

Ջանոնք բերաւ իր Սուրբ Երկիրը,

այս լեռը, որ իր գօրութեամբ նուանեց:

Անոնց առջեւէն դուրս վտարեց հոն բնակող ազգերը,

եւ վիճակ ձգել տալով՝ անոնց երկիրը իբրեւ ժառանգութիւն բաժնեց
Իսրայէլի ցեղերուն միջեւ, որոնք բնակեցուց անոնց տուններուն մէջ:

Բայց անոնք փորձեցին եւ դառնացուցին Բարձրեալ Աստուածը,

եւ անոր պատուիրանները չպահեցին,

այլ՝ հեռացան, դաւանանեցին իրենց նախահայրերուն նման,

անվաստահելի ծուռ աղեղի պէս:

Բարձունքներուն վրայ կանգնուած բազիններով բարկացուցին զԱստուած,

իրենց կուռքերով բորբոքեցին անոր նախանձախնդրութիւնը:

Աստուած տեսաւ ու գայրացաւ, եւ ամբողջապէս մերժեց իր ժողովուրդը:

Շիլոհի մէջ գտնուող իր Սրբարանը լքեց,

այն վրանը որ կանգներ էր՝ բնակելու համար մարդոց մէջ:

Թոյլ տուաւ որ թշնամին գերի առնէ Տապանակը,

նշանակը իր գօրութեան եւ փառքին:

Սրակոտոր ընել տուաւ իր ժողովուրդը,

իր գայրոյթը թափեց իր սեփական ժառանգութեան վրայ:

Կրակը լափեց անոնց երիտասարդները,

եւ աղջիկները մնացին առանց ամուսնութեան:

Քահանաները սրամահ եղան,

եւ անոնց այրիները սգալու առիթ չունեցան:

Ապա Տէրը կարծես փունէն արթնցաւ, գինիէն սթափող հերոսի մը պէս:

Ետ մղեց իր ոսոխները, յաւիտենական նախատինքի ենթարկելով զանոնք:

Մերժեց Յովսէփի երկրամասը, չուզեց Եփրեմի ցեղը,

այլ՝ Յուդայի ցեղը ընտրեց, եւ Սիոն լեռը նախընտրեց:

Հոն շինեց իր Սրբարանը՝ երկինքի նմանութեամբ,

եւ երկրին պէս հաստատուն յաւիտեան:

Ընտրեց Դաւիթը, իր ծառան, որ հովիւ էր ոչխարներուն,

եւ դաշտերէն գայն առնելով՝ բերաւ,

որպէսզի հովիւ դառնայ Աստուծոյ ժողովուրդին,

Աստուծոյ սեփական ժողովուրդին:

Եւ Դաւիթ ինք զանոնք հովուեց իմաստութեամբ,

յաջողութեամբ առաջնորդեց զանոնք:



ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ ՆԵՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ 78:54-72

Այս վերջին բաժնով, Ասաֆ կը ներկայացնէ շարունակութիւնը Իսրայէլի ժողովուրդին պատմութեան, թէ ինչպէս Ասրուամ զիրենք դուրս բերելէ յետոյ Եգիպտոսի ստրկութենէն, անցնելով անապատ-տափային թափառումներու միջով, զանոնք հասցուց մինչեւ խոստացուած երկիր, որ զայն կոչեց Սուրբ Երկիր: Սուրբ է որովհետեւ Սուրբին ներկայութեամբ լեցուն, այսինքն՝ Ասրուամ ներկայութեամբ պէտք է լեցուն ըլլայ: Սա ցոյց կու տայ, որ Ասրուամ մինչեւ վերժ առաջնորդեց ու կ'առաջնորդէ Իր ժողովուրդը մինչեւ իր ծրագրի կատարումին: Ասրուամ նուաճեց այն լեռը, որ Քանանացիներու պաշտամունքի լեռն էր, անով Ասրուամ ցոյց տուաւ Իր գործութիւնը: Այնպէս ինչպէս Եգիպտոսը, նոյնպէս ալ Քանանու երկիրը խորհրդանշէր չարին, եւ ահա Ասրուամ ցոյց կու տայ իր գործութեամբ նուաճելու եւ Իր ժողովուրդին ներկայութեամբ դուրս վերաբերելու հոն բնակող ազգերը, որպէսզի ժողովուրդը իր աչքերով տեսնէ բարձրեալն Ասրուամ գործութիւնը: Եւ անոնք բնակեցան պատրաստ վրաններու տակ:

Այս բոլորով հանդերձ, անոնք դարձեալ փորձեցին ու դառնացուցին Բարձրեալն Ասրուամ: Փոխանակ անոնք անդրադառնալու թէ Ասրուամ ինչ ըրաւ իր թշնամիներուն, փոխանակ անոնք վկաները դառնալու Բարձրեալն Ասրուամ, ընդհակառակը, անոնք պատուիրանները չպահեցին, հեռացան, դաւաճանեցին իրենց նախահայրերուն նման, որպէս անվարահելի ծուռ աղեղ: Ինչո՞վ բարկացուցին: Իրենց բազմաներով, կուռքերով, բորբոքեցին Ասրուամ նախանձախնդրութիւնը: Սա կը նշանակէ, անոնք իրենց տեղը փոխեցին, բայց ոչ իրենց նկարագիրը: Այս ընելնուն համար, Ասրուամ իր Սրբարանը լքեց, ար-փօսնեց որ թշնամին գերի տանի Տապանակը, այն Ուխտի Տապանակը, որ Ասրուամ ներկայութեան խոր-հրդանշէն է, որպէսզի անով ժողովուրդը պահ մը զգայ, որ Ասրուամ ներկայութիւնը իրենց հետ եւ իրենց մէջ չէ: Ասրուամ նաեւ ցոյց կու տայ, որ առանց իր թոյլտրութեան ոչինչ կը պատահի: Հետեւաբար իր թոյլտրութիւնը, որպէսզի իր ժողովուրդը անդրադառնայ, դարձի գայ, բայց ընդհակառակը: Ահա կը հասնի պահը, որ Ասրուամ իր զայրոյթը թափէ իր իսկ սեփական ժողովուրդին վրայ, կրակը լափէ անոնց երիտասարդները: Ահա թէ ինչու Քրիստոս առիթով մը պիտի յիշեցնէր, թէ դատաստանը փունէն պիտի սկսի: Սա չի նշանակեր, որ եթէ Ասրուամ ժողովուրդն են, ուրեմն, ամէն ինչ ընել իրաւունքը ունին կար-ծէք: Ոչ. երբ Ասրուամ պատուիրանները չեն պահեր, Անոր հաւատարիմ չեն ըլլար, Ասրուամ Իր զայ-րոյթը կը թափէ իր իսկ ժողովուրդին վրայ: Այո, ծանր է դատաստանը, բայց քանի քանի առիթներով Տէրը յիշեցուց, քանի առիթներով Տէրը ցոյց տուաւ Իր գործերը, բայց ամէն անգամ զինք բարկացուցին, ինչո՞վ. իրենց կուռքերով, չասրուամներու պաշտամունքով եւ անիրաւութիւններով: Նոյնիսկ քահանա-ները սրամահ եղան, ինչո՞ւ, որովհետեւ անոնք ալ չպահեցին Ասրուամ պատուիրանները: Անոնց այրի-ները սզալու առիթ ալ չունեցան, ինչո՞ւ: Որովհետեւ այնքան աղէտը մեծ էր ու համապարած, որ առիթ չունէին սզալու, հազիւ թաղեն իրենց մեռելները:

Բայց հասաւ պահը, երբ Տէրը արթնցաւ ողորմելու Իր ժողովուրդին: Եր մղեց Իր ոտխները: Մեր-ժելով Յովսէփի երկրամասը, չուզելով Եփրեմի ցեղը, այլ՝ ընտրելով Յուդայի ցեղը, եւ Սիոն լեռը իբրեւ բնակութեան վայր, հոն շինել տալու Իր Սրբարանը: Ինչո՞ւ Յուդայի ցեղը, որովհետեւ այդ ցեղէն էր Դաւիթ, այդ ցեղէն պիտի ըլլար նաեւ Յովսէփն ու Մարիամ, որմէ պիտի ծնէր նաեւ աշխարհի փրկիչը: Նախքան այդ, Դաւիթը կ'ընտրէ իբրեւ հովիւ Իր ժողովուրդին, հովուուելու իմաստութեամբ եւ յաջողութեամբ: Հովիւը կանչեց հովուուելու: